

Հաշվի առնելով ինֆլյացիոն ռիսկերը՝ առաջարկվում է մաս այդ ֆոնդերում կուտակային ապահովագրության նպատակով տարիների ընթացքում մուտքագրվող միջոցները ներդնել պետական պարտատոմսերում կամ այլ արժեթղթերում, որի համաձայնությունը պետք է ձեռք բերվի ապագա ապահովագրվողների, կամ որ նույնն է՝ ներկայիս աշխատողների կողմից:

Իրականում շատ ապահովագրական ըկերություններ կխուսափեն 63-73 տարեկան անձանց առողջության ապահովագրության կազմակերպումից՝ համարելով նրանց բարձր ռիսկային խումբ: Այս խոչընդոտի վերացման համար անհրաժեշտ է, որ երբ վրա հասնի կենսաթոշակային տարիքը տվյալ անձը ինքը որոշի թե, որ ապահովագրական ընկերությունում է ցանկանում ապահովագրել իր առողջությունը և մյուս կողմից էլ այդ ապահովագրական ընկերությունը պետք է հավաստիանա, որ ինքը կստանա այդ անձի կողմից կուտակված ողջ 1.5 մլն դրամը ( $40 \times 12 \times 3125 = 1500000$  կամ  $30 \times 12 \times 4170 = 1500000$ ) անկախ տվյալ անձի բժշկական ապահովագրության տևողությունից, քանի որ հնարավոր է այնպիսի տարբերակ, որ այդ անձը կենսաթոշակային տարիքի անցնելուց հետո ապրի ավելի քիչ քան 10 տարի, որը և կշահագրգռի ապահովագրական ընկերություններին իրականացնել վերոնշյալ ռիսկային խմբի բժշկական ապահովագրությունը:

Կենսաթոշակառուի կողմից ապահովագրական ընկերության կանոնին ընտրությունը կնպաստի ազատ մրցակցության ապահովմանը ապահովագրողների շրջանում և մյուս կողմից կխոչընդոտի պետական հովանավորչության ներքո աշխատող ապահովագրական ընկերությունների ձևավորմանը:

Այսպիսով, կուտակային ապահովագրությունը հնարավորություն է ընձեռում ցածր եկամուտներ ունեցող երկրներում մատչելի դարձնել բժշկական ապահովագրությունը հենց նրանց համար, ովքեր դրա կարիքը ավելի շատ ունեն, ովքեր անպաշտպան են և գտնվում են պետության հովանու տակ, այս մեխանիզմի կիրառմամբ լուծվում է կենսաթոշակառուների բազում առողջապահական խնդիրներ, իսկ դրա հետևանքով նվազում է պետության ռեսուրսների թեղ թե՛ կենսաթոշակառուների գծով, թե՛ առողջապահական համակարգին տրամադրվող միջոցների գծով, որի արդյունքում էլ հնարավորություն է ստեղծվում առկա պետական միջոցներն ավելի արդյունավետ օգտագործել և ուղղել առողջապահական ու սոցիալական համակարգերի զարգացմանը: Մյուս կողմից էլ կուտակային ապահովագրության վճարները, ներդրված լինելով պետական պարտատոմսերում, կարող են արդյունավետ օգտագործվել պետության զարգացման ուղղությամբ:

## ՏԻՓՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱՍ Մ. Զորանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

## ՀՀ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՂՐԱ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆ

Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին տեղի ունեցող վերափոխումների գործընթացում առանձնահատուկ դեր և նշանակություն է ստանում սոցիալական ապահովության այնպիսի համակարգի ստեղծումը, որն առավելագույնս կհամապատասխանի տնտեսական մոր հարաբերություններին: Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որդեգրել է մի քաղաքականություն, ըստ որի՝ սոցիալական ապահովության ոլորտին առնչվող հարցերը պետք է լուծվեն համալիր և համակարգված մոտեցմամբ՝ կիրառելով սոցիալական ապահովության բոլոր եղանակներն ու ձևերը (ապահովագրություն, ապահովություն, աջակցություն, խնամատարություն):

Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության բնագավառի կարևորագույն բաղկացուցիչ մասը կազմող կենսաթոշակային ապահովությունն ու ապահովագրությունը, պարտադիր սոցիալական ապահովագրության առանձին պետական ծրագրերն ուղղված են քաղաքացիների սոցիալական ապահովության իրավունքի իրականացմանն ինչպես աշխատունակ տարիքում (ժամանակավոր անաշխատունակությունից, գործազրկության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրություն), այնպես էլ, կախված տարիքից և աշխատունակության կամ կերակրողի կորստից, մախկինում ունեցած եկամտի համարժեք փոխհատուցում ապահովելուն: Սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության ոլորտում ներկայումս իրականացվում են կարևոր վերափոխումներ:

Առաջնահերթ նպատակներից է մաս՝ առանց խիստ վարչական միջոցառումներ իրականացնելու հնարավորին չափով բացահայտել ստվերային տնտեսությունն ու թաքնված զբաղվածությունը, իսկ սոցիալական քարտերի համակարգը նման հնարավորություն ընձեռում է:

Անհատական հաշվառման և անհատականացված հաշվետվությունների համակարգի ներդրումը հնարավորություն կտա մեծացնել պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկման բազան, իրականացնել կատարած կենսաթոշակային սոցիալական ապահովագրության մուծումների հստակ հաշվառում, ինչն անմիջական կապ կստեղծի յուրաքանչյուր անձի կենսաթոշակի չափի և նրա կատարած սոցիալական ապահովագրության վճարումների միջև:

Հայաստանի Հանրապետությունում կատարվող բարեփոխումները նախատեսում են կենսաթոշակային մոր համակարգ, որը կընդգրկի<sup>1</sup>.

- բոլոր աշխատող քաղաքացիների համար՝ պետական (պարտադիր) կենսաթոշակային ապահովագրություն,
- զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց համար՝ պետական կենսաթոշակային ապահովություն,

<sup>1</sup> <http://www.mss.am/arm/volort/socaphimn.htm> (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական ինտերնետային կայքը):

- գործատուների և վարձու աշխատողների կամավոր մասնակցությամբ՝ լրացուցիչ (ոչ պետական) կենսաթոշակային ապահովագրություն, որը կիրականացվի գործատուների և աշխատողների կամավոր վճարումների, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ պարտադիր ապահովագրական վճարումների հաշվին:

Պարտադիր կենսաթոշակային ապահովագրությունն ապահովագրական բյուջեի միջոցների հաշվին երաշխավորում է քաղաքացիների սոցիալական ապահովության իրավունքի իրականացումը տարիքի, հաշմանդամության, կերակրողին կորցնելու և օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Սահմանված է նաև պարտադիր կենսաթոշակային ապահովագրության ենթակա և ապահովագրական կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, որն ընդգրկում է հանրապետության՝ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող բոլոր քաղաքացիներին՝ բացառությամբ զինծառայողներին:

Պետական կենսաթոշակային համակարգի վերափոխումներն անհրաժեշտաբար ենթադրում են նաև լրացուցիչ (կամավոր) կենսաթոշակային ապահովագրության համակարգի ներդրում և զարգացում: Այս համակարգի կայացման համար նախ և առաջ անհրաժեշտ է համապատասխան օրենսդրական դաշտի առկայություն, որի ստեղծման առաջին քայլը կլինի «Ոչ պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի ընդունումը: Երկրորդ կարևոր պայմանը ֆինանսական շուկայի գոյությունն է (որն այսօր մեր հանրապետությունում գտնվում է կայացման փուլում), քանի որ այս համակարգի գործունեությունը հիմնված է ներդրումային քաղաքականության վրա, որի արդյունավետ իրականացումն առանց ֆինանսական շուկայի գոյության ուղղակի անհնար է:

Կամավոր կենսաթոշակային ապահովագրությունը պետք է հիմնվի գործատուների և քաղաքացիների կամավոր մասնակցության սկզբունքի վրա: Դրա համար անհրաժեշտ է պետական աջակցություն և հսկողություն, քանի որ այս համակարգը չի կարող ձևավորվել առանց հստակ երաշխիքների և պետության կարգավորիչ դերի: Այն կիրականացվի կենսաթոշակային հիմնադրամների և ապահովագրական ընկերությունների միջոցով: Համակարգը կֆինանսավորվի գործատուների և ապահովագրվածների կամավոր վճարումների, ինչպես նաև դրանց ներդրումից ստացված եկամուտների հաշվին: Այս համակարգի ձևավորման վրա մեծ ազդեցություն կունենա նաև համապատասխան հարկային քաղաքականությունը:


Հայաստանի Հանրապետությունում 2002-2006 թվականներին ընդհանուր կենսաթոշակառուների թվաքանակը և կազմը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1<sup>1</sup>

Կենսաթոշակառուների թվաքանակը և կազմը

|                                                    | 2002    | 2003    | 2004    | 2005    | 2006    |
|----------------------------------------------------|---------|---------|---------|---------|---------|
| Ընդհանուր կենսաթոշակառուների թվաքանակը, այդ թվում՝ | 543 646 | 543 710 | 540 298 | 533 288 | 527 496 |
| Ապահովագրական կենսաթոշակառուներ                    | 485 446 | 48 7867 | 486 003 | 479 791 | 473 612 |
| Սոցիալական կենսաթոշակառուներ                       | 46 675  | 45 258  | 44 657  | 44 858  | 46 233  |

Նախկին խորհրդային 14 երկրների շարքում նվազագույն կենսաթոշակի ցուցանիշով առաջին տեղը զբաղեցնում է Էստոնիան, որտեղ այն կազմում է 106.8 ԱՄՆ դոլար, ամենացածր ցուցանիշը գրանցվել է Տաջիկստանում՝ 5.8 ԱՄՆ դոլար: Հայաստանում այն կազմում է 11.7 ԱՄՆ դոլար, որի արդյունքում Հայաստանը զբաղեցնում է 12-րդ տեղը 14 երկրների շարքում (տե՛ս գծանկար 1):



Գծանկար 1: Նախկին խորհրդային 14 երկրների նվազագույն կենսաթոշակի ցուցանիշները (ԱՄՆ դոլար)<sup>2</sup>

<sup>1</sup> «Պարենային ապահովություն և աղքատություն, հունվար-մարտ 2007» տեղեկագիր, Հայաստանի Հանրապետություն, Ազգային վիճակագրական ծառայություն, 2007:

<sup>2</sup> Աղբյուրը՝ Հայաստանի սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի ինտերնետային կայք (www.sif.am):

Հայաստանի Հանրապետությունում նվազագույն կենսաթոշակի չափ սահմանված չկա, բայց ոչ պաշտոնապես այն նույնացվում է հիմնական կենսաթոշակի՝ 4250<sup>1</sup> դրամի հետ:

Ընդհանուր կենսաթոշակի միջին չափը 2000թ. կազմել է 4473 դրամ, 2006թ. 10983 դրամի դիմաց, աճը կազմել է 6510 դրամ, կամ կենսաթոշակի չափը աճել է շուրջ 2.5 անգամ:


Ապահովագրական կենսաթոշակի միջին չափը 2000թ. կազմել է 4358 դրամ 2006թ. 11381 դրամի դիմաց, աճը կազմել է 7023 դրամ կամ կենսաթոշակի չափը աճել է շուրջ 2.6 անգամ:

Սոցիալական կենսաթոշակի միջին չափը 2000թ. կազմել է 3404 դրամ 2006թ. 5496 դրամի դիմաց, աճը կազմել է 2092 դրամ կամ 1.6 անգամ:


Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամներին տրվող կենսաթոշակի միջին չափը 2000թ. կազմել է 7017 դրամ 2006թ. 10756 դրամի դիմաց, աճը կազմել է 3739 դրամ կամ 1.5 անգամ:

Կենսաթոշակի միջին չափն ըստ տեսակների և ըստ երկրների ներկայացված է գծանկարներ 2-ում և 3-ում համապատասխանաբար՝:

Նախկին խորհրդային 14 երկրների շարքում միջին կենսաթոշակի ցուցանիշով առաջին տեղը զբաղեցնում է Էստոնիան, որտեղ այն կազմում է 220.2 ԱՄՆ դոլար, ամենացածր ցուցանիշը գրանցվել է Տաջիկստանում՝ 12.8 ԱՄՆ դոլար: Հայաստանում այն կազմում է 27.3 ԱՄՆ դոլար, որի արդյունքում Հայաստանը զբաղեցնում է 11-րդ տեղը 14 երկրների շարքում:



Գծանկար 2: Կենսաթոշակի միջին չափն՝ ըստ տեսակների



Գծանկար 3: Կենսաթոշակի միջին չափն՝ ըստ երկրների

Կենսաթոշակը Հայաստանի Հանրապետությունում հաշվարկվում է հետևյալ բանաձևի միջոցով՝

$\text{Կ} = \text{Հ} + (\text{a} \times \text{Ա}) \times \text{Գ} + \text{Վ/Տ}^2$ , որտեղ՝

Կ-ն կենսաթոշակի ամսական գումարն է,

Հ-ն՝ հիմնական կենսաթոշակի չափը,

ա-ը՝ ապահովագրական ստաժի տարիները,

Ա-ն՝ մինչև անձնավորված հաշվառման ներդրումը ձեռք բերված ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը (2006թ. հունվարի 1-ից 180 դրամ<sup>2</sup>, 2007թ. հունվարի 1-ից 230 դրամ),

Գ-ն՝ կենսաթոշակառուի անձնական գործակիցը (մինչև 25 տարին ներառյալ ստաժի յուրաքանչյուր տարվա համար՝ 0.04, իսկ 25 տարին գերազանցող ստաժի յուրաքանչյուր տարվա համար՝ 0.02),

<sup>1</sup> «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդված

<sup>2</sup> Աղբյուրը՝ Հայաստանի սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի ինտերնետային կայք (www.sif.am):

<sup>3</sup> http://www.sif.am (Հայաստանի սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի պաշտոնական ինտերնետային կայք):

<sup>4</sup> ՀՀ կառավարության 15.12.2005թ. N 2150-Ն որոշում (աղբյուրը՝ www.gov.am):

Վ-ն՝ անձնավորված հաշվառման ներդրումից հետո անհատական հաշիվներում արտացոլվող՝ կենսաթոշակային ապահովագրության համար կատարված վճարումների ընդհանուր գումարի մասին տվյալը, S-ն՝ կենսաթոշակի անցնելու պահին կանանց և տղամարդկանց կյանքի սպասվելիք միջին տևողությունը ամիսներով\*:

Սոցիալական վճարների դրույքաչափերը հետևյալն են<sup>1</sup>։

1. Գործատուները յուրաքանչյուր վարձու աշխատողի համար սոցիալական վճարներ են կատարում հետևյալ չափերով.

| Սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտի ամսական չափը | Սոցիալական վճարի չափը                                            |
|-----------------------------------------------------|------------------------------------------------------------------|
| մինչև 20 000 դրամ                                   | 7 000 դրամ                                                       |
| 20 000-ից մինչև 100 000 դրամ                        | 7 000 դրամ և գումարած 20 000 դրամը գերազանցող գումարի 15 տոկոսը  |
| 100 000 դրամից ավելի                                | 19 000 դրամ և գումարած 100 000 դրամը գերազանցող գումարի 5 տոկոսը |

2. Վարձու աշխատողները սոցիալական վճարումներ են կատարում աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների 3 տոկոսի չափով:

Տվյալ հաշվարկման մեխանիզմն ունի որոշակի թերություններ, որոնցից ամենաակնառուն դիտարկենք հետևյալ իրավիճակի մանրամասնումը: Օրինակ՝ տղամարդը և կինը ունեն 35 տարի աշխատանքային ստաժ, որից 5 տարիները եղել են անհատական հաշվառման համակարգի ներդրումից հետո, նրանց անվանական աշխատավարձը կազմել է 140 000-ական դրամ և նրանք սկսել են ստանալ կենսաթոշակ 63 տարեկանում:

Մինչ ընդհանուր կենսաթոշակի հաշվարկումը, պարզենք կենսաթոշակային ապահովագրության համար կատարված նրանց վճարումների ընդհանուր գումարը՝ Վ-ն, վերջին 5 տարիների, կամ որ նույնն է, 60 ամիսների համար:

Հետևաբար՝

$$\text{Վ}_{60\text{ ամիս}} = [140000 \times 3\% + (19000 + (140000 - 100000) \times 5\%)] \times 60 = 1\,512\,000 \text{ դրամ}$$

$$\text{Վ}_{\text{տղամարդ}} = 4250 + (35 \times 230) \times (25 \times 0.04 + 10 \times 0.02) + 1\,512\,000 / 87.6 = 4250 + 8050 \times 1.2 + 17260 = 31\,170 \text{ դրամ}$$

$$\text{Վ}_{\text{կին}} = 4250 + (35 \times 230) \times (25 \times 0.04 + 10 \times 0.02) + 1\,512\,000 / 162 = 4250 + 8050 \times 1.2 + 9330 = 23\,240 \text{ դրամ,}$$

այսպիսով՝ աշխատելով 35 տարի միանման պայմաններում և միևնույն աշխատավարձով մեր օրինակի տղամարդը և կինը անհատական հաշվառման համակարգում կատարելով նույն քանակի վճարումներ վերջին 5 տարիների ընթացքում (1 512 000 դրամ)՝ անցնելով թոշակի, նրանց եկամուտների միջև նկատվում է կտրուկ տարբերություն, որն արդարացի չէ, և ակնհայտ է, որ այդ տարբերությունը կլինի ավելի շատ, եթե նրանց աշխատանքային 35 տարիներից, օրինակ, 15-ի ընթացքում կիրառվեր անհատական հաշվառման մեխանիզմը, այլ ոչ թե 5:

Այս թերությունը շտկելու նպատակով և հաշվի առնելով, որ տղամարդկանց և կանանց համար սահմանված է կենսաթոշակային տարիքի միևնույն սահմանը՝ 63 տարին, ապա առաջարկվում է կենսաթոշակի հաշվարկման «S» բաղադրիչի համար հիմք ընդունել բնակչության կյանքի միջին տևողությունը, որն, ինչպես նշվել է, կազմում է 73.5 տարի, և այս պարագայում 63 տարեկանում թոշակի անցնելիս S-ն հավասար կլինի 126 ամսին, իսկ մեր օրինակում կենսաթոշակի հաշվարկը կստանա հետևյալ տեսքը՝

$$\text{Վ} = 4250 + 8050 \times 1.2 + 1\,512\,000 / 126 = 25\,910 \text{ դրամ:}$$

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հանրապետությունում տնտեսապես ակտիվ բնակչության շրջանում կան աշխատանքային տարիքից բարձր մարդիկ՝ առաջարկվում է նրանց համար կենսաթոշակի ստացման տարիքն ընդունել նրանց՝ աշխատանքից փաստացի ազատման տարիքը, որը կլինի կամովին և սեփական նախաձեռնությամբ: Եթե այդ կենսաթոշակառուն շարունակում է աշխատել, որի աշխատանքը բավարարում է և՛ իրեն, և իր գործատուին, ապա վերջինիս արդյունքում պետության ուսերից որոշ չափով կազատվի այն կենսաթոշակառուների բեռը, որոնք ունեն աշխատանք և նրանց բավարարում է իրենց վաստակած միջոցները, սակայն սա չի նշանակում, որ տվյալ դրույթը արգելում է նրանց օգտվել իրենց՝ կենսաթոշակ ստանալու իրավունքից, սակայն տեղի է ունենում այդ իրավունքից օգտվելու տարկետում: Որպեսզի նշված դրույթը շահագրգռի տնտեսապես ակտիվ կենսաթոշակառուներին, առաջարկվում է կենսաթոշակի հաշվարկման բանաձևում կատարել հետևյալ փոփոխությունը ևս. «S» բաղադրիչն առաջարկվեց հաշվել հետևյալ սկզբունքով՝  $S_{\text{նոր}}^2 =$  բնակչության կյանքի միջին տևողություն – կենսաթոշակային սահմանված տարիք, իսկ երբ հիմք ընդունվի կենսաթոշակային տարիքի տարկետման հանգամանքը, ապա S-ն պետք է հաշվարկվի հետևյալ կերպ՝

$S_{\text{մասն}}^3 =$  բնակչության կյանքի միջին տևողություն – փաստացի կենսաթոշակային տարիք, որը կլինի այն պահին, երբ աշխատանքային տարիքից բարձր տարիք ունեցող անձը կիրառարկի աշխատանքից և կցանկանա ստանալ կենսաթոշակ: Այս պարագայում S-ն կստացվի ավելի փոքր մեծություն, ինչը ենթադրում

\* Ըստ Ազգային վիճակագրական ծառայության 2006 թվականի տարեգրքի՝ տղամարդկանց կյանքի սպասվող տևողությունը ծննդյան պահից 2005 թվականին կազմում էր 70.3 տարի, կանանցը՝ 76.5, իսկ ամբողջ բնակչությանը՝ 73.5 տարի, հետևաբար՝ 63 տարեկանում կենսաթոշակ ստանալիս՝ տղամարդկանց համար  $S_m = (70.3 - 63) \times 12 = 87.6$ , իսկ կանանց համար՝  $S_k = (76.5 - 63) \times 12 = 162$ , ընդհանուր միջինը՝  $S = (73.5 - 63) \times 12 = 126$ :

<sup>1</sup> Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի պաշտոնական ինտերնետային կայք՝ <http://www.sif.am>:

<sup>2</sup> Ընդհանուր իրավիճակի համար, երբ տեղի չի ունեցել կենսաթոշակային տարիքի տարկետում:

<sup>3</sup> Մասնավոր դեպք՝ տեղի է ունեցել կենսաթոշակային տարիքի տարկետում:

է, որ կենսաթոշակը հետագայում կլինի ավելի բարձր և այս տեսակետից դիտարկելիս, տվյալ աշխատողը շահագրգռված կլինի, որքան հնարավոր է, երկար տարիներ աշխատել, իսկ պետությունը այդ տարիների ընթացքում չի մտածի նրա կենսաթոշակի ընթացիկ ապահովման մասին:

Այս մոտեցման պարագայում հնարավոր է նաև մի տարբերակ, երբ այդ անձն աշխատի այն տարիքից էլ ավելի, քան հանրապետությունում կյանքի միջին տևողությունն է, և այս դեպքում «Տ<sub>մասն</sub>» բաղադրիչը կստանա բացասական մեծություն: Նման իրավիճակից խուսափելու համար անհրաժեշտ է սահմանել «Տ<sub>մասն</sub>» բաղադրիչի ստորին սահման, որը հավասար կլինի «Տ<sub>թող</sub>» x 50%<sup>1</sup>, այսինքն՝ եթե վերոնշյալ անձը շարունակում է աշխատել 63 տարեկանից հետո ևս 63 ամիս<sup>2</sup> և ավելի, ապա նրա կենսաթոշակի հետագա աճը կապահովվի միայն անձնական հաշվառման համակարգում նրա լրացուցիչ վճարումների հաշվին, իսկ կենսաթոշակի ավելացումն ապահովող «Տ<sub>մասն</sub>» գործակիցը կդադարի գործել:

Մյուս կողմից, եթե չկիրառվի կենսաթոշակային տարիքի տարեկան գաղափարը, ապա ստացվում է մի իրավիճակ, որ կենսաթոշակառու, շարունակելով աշխատել 63 տարին լրանալուց հետո, միաժամանակ կատարում է վճարումներ անձնավորված անհատական հաշիվներում և շարունակում կենսաթոշակ ստանալ այդ հաշիվներում կուտակված միջոցների հաշվին, այսինքն՝ այն հանգամանքը, որ այդ տարիների ընթացքում նրա կուտակված միջոցները<sup>3</sup> արդեն սկսում են նաև ամեն ամիս նվազել (ընդ որում, եթե անհատական հաշիվներին կատարվող մուտքերը եղել են ավելի երկար ժամանակահատվածում, քան մեր բանաձևի «Տ» բաղադրիչի արժեքն է, ապա դրանք նվազում են մի քանի անգամ արագ, քան կատարվում են դրանցում վճարումներ) հաշվի չի առնվում, և անգամ եթե հաշվի առնվի, ապա դրանով իսկ խիստ կբարդանա ընթացիկ կենսաթոշակի հաշվարկը:

Ներկայիս կենսաթոշակի հաշվարկման բանաձևն ունի մեկ այլ թերություն ևս՝ այն իր մեջ պարունակում է կրկնահաշվարկի տարր: Ինչպես տեսնում ենք բանաձևից, այն բաղկացած է երկու մասից՝ մինչ անձնավորված հաշվառման համակարգի ներդրումը ընգրկված ժամանակահատվածում կենսաթոշակի հաշվառումը և դրա ներդրումից հետո: Բանաձևի «n» բաղադրիչը ցույց է տալիս ընդհանուր ապահովագրական ստաժի տարիները, մինչդեռ հարկավոր է տարանջատել այն երկու մասի, որպեսզի համապատասխանեցվի ընդհանուր բանաձևի գաղափարին, այսինքն՝ դրա մեջ չպետք է արտացոլվի անհատական հաշվառման համակարգի ներդրումից հետո անցած աշխատանքային տարիները:

<sup>1</sup> 50%-ն առաջարկվել է արդարացիության սկզբունքից ելնելով, քանի որ այս պարագայում շահարկող կողմերը երկուսն են՝ պետությունը և կենսաթոշակառուն:

<sup>2</sup> «Տ<sub>թող</sub>»-ը առաջարկվեց ընդունել 126 ամիս, հաշվարկված այն փաստի հիման վրա, որ ողջ բնակչության կյանքի միջին տևողությունը 73.5 տարի է:

<sup>3</sup> կենսաթոշակի հաշվառման բանաձևում Վ-ն կատարված վճարումների ընդհանուր գումարի մասին տվյալն է, այլ ոչ թե այդ հաշիվների ընթացիկ մնացորդը: